# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ԽՆԿՈՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

✉ Հայաստանի Հանրապեպետություն Լոռու մարզ
Խնկոյան համայնք, փողոց 1 թիվ 19

☎ 093476682

«17» մայիսի 2017թ.

N 55

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզպետ պարոն
Ա. Նալբանդյանին

Հարգելի պարոն մարզպետ.

Ձեզ եմ ներկայացնում Խնկոյան համայնքի ավագանու 12.05.2017թ. N 13, N 14-Ա, N 15 որոշումները:

Առդիր՝ 5 թերթ:

Հարգանքներով՝

Համայնքի ղեկավար Վ. Համբարձումյան

ԽՆԿՈՅԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՀՀ 06801681

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Խնկոյան համայնք, հասցե գ. Խնկոյան 1 փողոց 19 շենք
հեռ. 093476682
էլ.Փոստ՝ khnkoyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<12>> մայիսի 2017 թվականի N 13

ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 12-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով, Խնկոյան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Խնկոյան համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 12-ի նիստի օրակարգը.

### Օ Ր Ա Կ Ա Ր Գ

**Խնկոյան համայնքի 2017 թվականի մայիսի 12-ի նիստի**

1. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:
2. Խնկոյան համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասը Հայաստանի Հանրապետությանը նվիրելու մասին:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ՝ | Դեմ՝ | Ձեռնպահ՝ |
|---|---|---|---|
| Ավագյան Վարդուհի Արամայիսի | [signature] | | |
| Հարությունյան Շիրակ Աղասու | [signature] | | |
| Ղազարյան Բագրատ Միշայի | [signature] | | |
| Մանուկյան Սևակ Վազգենի | [signature] | | |

ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ [signature] Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Կ.Տ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Խնկոյան համայնք, հասցե գ Խնկոյան,
հեռ.093476682 էլ. փոստ՝ Khnkoyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» մայիսի 2017 թվական, 14-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասին, համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 22-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Խնկոյան համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 8-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումը և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

**Խնկոյան համայնքի ավագանին որոշում է.**

1. Բավարարել համայնքի բնակչի դիմումը և համայնքի բյուջեից նրա ընտանիքին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչին վճարել հատկացված գումարը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ՝ | Դեմ՝ | Ձեռնպահ՝ |
|---|---|---|---|
| Ավգյան Վարդուհի Արամայիսի | [signature] | | |
| Հարությունյան Շիրակ Աղասու | [signature] | | |
| Ղազարյան Բագրատ Միշայի | [signature] | | |
| Մանուկյան Սևակ Վազգենի | [signature] | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ______________ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
(ստորագրություն) (Անուն, ազգանուն)

Կ.Տ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Խնկոյան համայնքի ավագանու
2017 թվականի մայիսի 12-ի N 14-Ա որոշման

# ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԽՆԿՈՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿՉԻ

1. Վարդանուշ Խաչատրյան Սերգեյի 25.0 հազար դրամ, սոց. օգնություն:

ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ____________ Ա. ԲԱԲԱՅԱՆ

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

# Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Խնկոյան համայնքի  զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ մշտական գործող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվեց Խնկոյան համայնքի ղեկավարին դիմած նույն համայնքի բնակիչ Վարդանուշ Սերգեյի Խաչատրյանի 25000 դրամի սահմաններում ֆինանսական օգնության խնդրանքի մասին դիմումը և սոցիալական պայմանը: Արդյունքում պարզվեց, որ.

Վարդանուշ Սերգեյի Խաչատրյանի ամուսինը մահացած է: Ունի երկու երեխա: Սոցիալապես անապահով է:

Խնկոյան համայնքի բյուջեի նկատմամբ հարկային պարտականությունները կատարում է պատշաճ կերպով: Հանձնաժողովը իր համաձայնությունը տվեց Վարդանուշ Սերգեյի Խաչատրյանի դրամական օգնության խնդրանքի բավարարմանը:

Հանձնաժողովի անդամներ.

Հանձնաժողովի նախագահ՝ Արթուր Բաբայան

հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Վազգեն Մանուկյան

հաքնձնաժողովի քարտուղար՝ Վարդուհի Ավագյան

հանձնաժողովի անդամներ՝ Շիրակ Հարությունյան

Բագրատ Ղազարյան

Նորայր Սարիբեկյան

Գարեգին Ավետիսյան

05.05.2017թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Խնկոյան համայնք, հասցե գ. Խնկոյան 1 փողոց 19 շենք
հեռ. 093476682
էլ.Փոստ՝ khnkoyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<12>> Մայիսի 2017 թվականի N 15

### ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությունը համայնքի ավագանին.

**որոշում է՝**

1. ՀՀ կառավարության 8 մայիսի 2003 թվականի N 584-Ն որոշմամբ Խնկոյան համայնքին անհատույց սեփականության իրավունքով փոխանցված 06-046-0029-0003 ծածկագրով 0,018 հա պետական սեփականության գույքով ծանրաբեռնված /<<Մեծ Պարնիի>> առողջության կենտրոնի հաշվեկշռում գտնվող 66,7 քմ մակերեսով Ֆլեղշերոմանկաբարձական կետ/ հողամասը, որպես <<Մեծ Պարնիի>> առողջության կենտրոնի հաշվեկշռում գտնվող 66,7 քմ մակերեսով Ֆլեղշերոմանկաբարձական կետ պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ հողամաս, Խնկոյան համայնքի ավագանին տալիս է իր համաձայնությունը 06-046-0029-0003 ծածկագրով 0,018 հա համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը Հայաստանի Հանրապետությանը նվիրելուն:
2. Համայնքի ղեկավար Վ. Համբարձումյանին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության լիազոր ներկայացուցչի հետ կնքել նվիրատվության պայմանագիր:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ՝ | Դեմ՝ | Ձեռնպահ՝ |
|---|---|---|---|
| Ավգյան Վարդուհի Արամայիսի | | | |
| Հարությունյան Շիրակ Աղասու | | | |
| Ղազարյան Բագրատ Միշայի | | | |
| Մանուկյան Սևակ Վազգենի | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ____________ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
(ստորագրություն) (անուն, ազգանուն)